Վարդանի գիւղ կամ Վարդանշէն։ 4. Էրմանիտ Հայի գիւղ կամ Հայկաշէն։ 5. Մուխանց—մուխն անցած, կամ մուխը մարած։ 6. Օրաբան՝ օրուայ գործելու տեղ, կամ օրուայ խօսք։ 7. Պտէղ—պարտէզ։ 8. Քուն-գիւտ—քունը գտնող կամ քուն գտնելու տեղ։ 9. Կոխ-մուխ՝—մուխը կոխել ոտքով։ 10. Ղութղաշէն—խութի վրայ շինուած գիւղ։ 11. Քարմուղխ—քուրմերի *) բազմութիւն կամ քուրմերի սանդուղ և այլն։

Վերև յիշուած մահմեդականութիւն ընդունող գիւղերից ոմանց մէջ չկայ Հայոց եկեղեցի, այլ կան խաչքարեր և գերեզմանոցներ, որոնց տապանաքարերի վրայ գրուած են Հայերէն լեզուով։ Այդպիսի տապանաքարեր ես տեսել եմ և վրայի մամուռն ու խոտերը մաքրելուց յետոյ կարդացել եմ Վարդանլու թրքացած գիւղի հին գերեզմանատան մէջ և իմ տպաւորութիւններս գրել եմ 1880—81 թ. մեր պարբերական թերթերի զանազան համարներում։ Նմանապէս կան և այնպիսի թրքացած գիւղեր ևս, որոնց մէջ կանգուն մնացած են մինչև ցարդ գեղեցիկ եկեղեցի-

---

*) Ի դէպ է ասել, որ Զաքաթալի շրջանի Քուրմուղխը, իւր համանուն գետի կատաղի ալիքների պղտոր ջրով և քուրմերի բազմութեամբ ոչ մի վնաս չեն տուել Հայ եկեղեցուն և մեր ժողովրդին, այն ինչ, Օրբազարի (Խրիմում) անատամ Հայ քուրմը պղծեց ամբողջ Խրիմի թերակղզին իւր երկարամեայ անգործունէութեամբ, թէ մեր եկեղ. և թէ մեր ժողովրդին անփոխարինելի, ահագին վնասներ տուեց, բայց մնաց անպատիժ, իբրև գառնազգեստ գայլ և որպէս սուտ ճգնաւոր։